**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 11-ը հունիսի 2019թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, Ա. Մուրադյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԾ առաջատար մասնագետ, Ռ. Չալոյան,

**հանձնաժողովի քարտուղար՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

*ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են, բացառությամբ* **«Վագարդ» ՍՊԸ-ի, ով** ըստ ՀՀ կառավարությանն եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (26.04.2019թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 2,000 (երկու հազար) ՀՀ դրամի ժամկետանց պարտավորություններ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ժամկետանց պարտավորության չափը չի գրազանցում ՀՀ դրամի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը և մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի 1%-ը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց չմերժել վերջինիս հայտը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ ներքոնիշյալ դեպքերի.***

- **«Նարսան» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում բացակայում են ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններով նախատեսված **«մասնագիտական փորձառություն»** որակավորման չափանիշին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը: Բացի այդ, **«Նարսան»** ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1)-ում բացակայում են 5-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով մասով ընթացակարգի հրավերով ***սահմանված ԳՕՍՏ-երը:***

- «**Երվադա**» **ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են ընթացակարգի հրավերով նախատեսված «**մասնագիտական փորձառություն**» որակավորման չափանիշը գնահատելու համար ներկայացված նախկինում կատարած ՇՀԱՊՁԲ-4/4-1 պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- «**Վագիմպորտ**» **ՍՊԸ-ի** կողմից մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը գնահատելու համար ներկայացված **16.12.2015թ. ԳՄՆԱՊՍԻ-ՇՀԱՊՁԲ-15/7-15/1** ծածկագրով պայմանագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պահանջներին, ըստ որի մասնակիցը նմանատիպ պայմանագիրը պետք է պատշաճ ձևով իրականացրած լինի հայտը ներկայացնելու տարվա (2019) և դրան նախորդող երեք տարվա ընթացքում (2016, 2017, 2018), այնինչ «Վագիմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագիրը կնքված է **16.12.2015թ.-ին և կատարված է նույն ամսում**:

- «**ՍՅ.ՌՈՒ.ՄԱ**» **ՍՊԸ-ի** կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված 12.04.2019թ. կնքված NՍՅ-ԳԵՈ 2019/3 ծածկագրով պայմանագրի գնման առարկա են հանդիսանում «էլեկտրական լամպ E27» և «էլ. շիկացման լամպ 100Վտ» ապրանքատեսակները, որոնք ներառված են գնումների միասնական անվանացանկի թիվ՝ ***31000000*** «էլեկտրական մեքենաներ, սարքավորումներ, սարքեր և սպառման առարկաներ, լուսավորություն» անվանատողում, այնինչ ընթացակարգի հրավերով որպես նմանատիպ են սահմանվել **տնտեսական ապրանքների** մատակարարման պայմանագրերը, ընդ որում տնտեսական ապրանքները, այդ թվում նաև «Ավել» ապրանքատեսակը ներառված են գնումների միասնական անվանացանկի թիվ՝ ***39000000*** «Կահույք (ներառյալ գրասենյակային կահույքը), կահավորանք, կենցաղային տեխնիկա (բացառությամբ լուսավորության) և մաքրման համար նախատեսված արտադրանք» անվանատողում: Վերոնշյալ հիմնավորմամբ գնահատող հանձնաժողովը որոշեց «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 12.04.2019թ. կնքված NՍՅ-ԳԵՈ 2019/3 ծածկագրով պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան (ոչ նմանատիպ):

- «**Վիէյչ Գրուպ**» **ՍՊԸ-ի կոնսորցիում** (**«Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ**) կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված 03.04.2018թ. կնքված N010-AO-18/3 և 01.08.2018թ. կնքված N012-AC-18/07 ծածկագրերով պայմանագրերով մատակարարված ապրանքները հանդիսանում են շինարարական նյութեր, իսկ ընթացակարգի հրավերով 6-րդ չափաբաժնի համար որպես նմանատիպ են սահմանվել **տնտեսական ապրանքների** մատակարարման պայմանագրերը և միևնույն ժամանակ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետը նշված ապրանքատեսակները չեն դասվում համանման (նմանատիպ) համարվող տնտեսական գործունեության նույն խմբում Վերոնշյալ հիմնավորմամբ գնահատող հանձնաժողովը որոշեց «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի կոնսորցիում («Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված 03.04.2018թ. կնքված N010-AO-18/3 ծածկագրով պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան (ոչ նմանատիպ):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/24» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված շտկման քննարկման վերջնաժամկետի հաջորդ օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Մուրադյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Ռ. Չաթոյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Մաղաքյան |